ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 000161

ք. Երևան Քաղաքացիների միջոցառումների (շուկաների վերակազմակերպում գեղաշ. ծառայություններ) 14 10 2022 թ.

_____ ի դեմս տնօրեն Գագիկ Բոշյանի այսուհետ սույն պայմանագրի տեքստում՝ Պատվիրատու, մի կողմից և ԳԱԶԱՐԴ սպը, ի դեմս տնօրեն Ս.Խաչատրյանի, այսուհետ սույն պայմանագրի տեքստում՝ Կատարող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմ անագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մ ատուցել սույն պայմանագրի 1.2. կ ետում նշված ծառայությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար՝ սույն պայմանագրի 3-րդ կ ետով սահմանված կարգով:
1.2. Կատարողը պարտավորվում է Պատվիրատուին մատուցել հետևյալ ծառայությունները՝ ____ Գազի ծխաօդատարների ստուգում _____.
1. Երբեմար և օդատար ուղիների ստուգումներ կրկնակի ստուգումներ
2. Գազի վերանորոգում ստուգումներ ուղի հանում

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Կատարողը պարտավոր է՝

2.1.1. Ծառայությունները մատուցել պատշաճ որակով և ամբողջ ծավալով,
2.1.2. Պատվիրատուի պահանջով անհապաղ և անհատույց վերացնել հայտնաբերված բոլոր թերությունները,
2.1.3. Անձամբ կատարել ծառայությունները,
2.1.4. Հաշվետու լինել Պատվիրատուին՝ կապված սույն պայմանագրի հետ առաջացած բոլոր հարցերի հետ:

2.2. Կատարողն իրավունք ունի՝

2.2.1. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 3-րդ կետով սահմանված կարգը երկու անգամ խախտելու դեպքում՝ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից:

2.3. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.3.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու նրա գործունեությանը,
2.3.2. Ցանկացած ժամանակ հրաժարվել պայմանագիրը կատարելուց՝ Կատարողին վճարելով սահմանված գնի այն մասը, որը համապատասխանում է մինչև պայմանագրի կատարումից Պատվիրատուի հրաժարման մասին տեղեկություն ստանալը մատուցված ծառայությունների չափին:
2.3.3. Պատվիրատուն պարտավոր է ծառայությունների դիմաց վճարել սույն պայմանագրի 3-րդ կետում նշված գնին և կարգին համապատասխան:

3. Պայմանագրի գինը և հաշվարկների կարգը

3.1. Սույն պայմանագրով ծառայությունների համախառն վարձատրումը կհաշվարկվի համաձայն աշխատանքների կատարման հանձնման ընդունման

արձանագրությունից հետո դուրս գրված հաշիվ ապրանքագրի, որը կներառի հարկերը և պարտադիր այլ վճարները՝ 84000 ՀՀ դրամ:

3.2. Վճարումը կկատարվի մինչև սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների ամբողջովին կատարման ամսվան հաջորդող ամսի 15 ը՝ ստորագրված և վավերացված ընդունման-հանձնման արձանագրության հիման վրա:

4. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ – ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

5. Այլ պայմաններ

5.1. Սույն պայմանագիրը կնքվում է մինչև՝ 25 12 2021 թ. և ուժի մեջ է մտնում այն ստորագրելու պահից:

5.2. Սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ դադարեցվել կողմերից յուրաքանչյուրի կողմից՝ այդ մասին մյուս կողմին մեկ շաբաթ առաջ գրավոր ծանուցելով:

5.3. Սույն պայմանագրի բոլոր փոփոխությունները և լրացումները կատարվում են գրավոր՝ երկկողմանի ստորագրմամբ:

5.4. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

5.5. Սույն պայմանագիրը կնքված է 2 (երկու) օրինակից՝ հայերեն լեզվով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

6. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու՝	Կատարող՝
Հայաստանի աշխատակազմ (Շուկայի մշակութային զբոսաշրջության նախարարություն)	ԳԱԶԱՐԴ սպը
Երևան Կիևյան փող. թաղ 1	Երևան Պռոշյան 2/1
ՀՎՀՀ 02505554	ՀՎՀՀ 03555685
Հ/հ 900010 [illegible]	Արարատ բանկ փԲԸ
Հ Հ [illegible]	151005485439100
	հեռ. 096-16-00-02
Կ.Տ.	Կ.Տ.